Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2016թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը, ժամկետները և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:
2. Ծրագիրը մշակվել է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2016թ. փետրվարի 18-ի թիվ 5-Ա որոշման հիման վրա:
3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում. քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայություն, գործավարություն և փաստաթղթաշրջանառություն, ժամանակի կառավարում:
4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:
5. Ուսումնառության ժամաքանակը նախատեսվում է 32 ակադեմիական ժամ: Ուսումնառությունն իրականացվում է մեկ շաբաթ ժամկետով (ներառյալ՝ 4 օր դասընթացները) և ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:
6. Գնահատումն իրականացվում է բանավոր եղանակով՝ միասնական քննությամբ:
7. Ծառայողների վերապատրաստման ժամանակացույցը սահմանվում է 2016 թվականի մայիս-հունիս ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	J-019-16	ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը	12
2.	G-019-16	Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում	12
3.	G-006-16	Ժամանակի կառավարում	8

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. J-019-16. ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության նորմատիվ իրավական կարգավորումը, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողի վարքագծի կանոնները, կադրային քաղաքականության առանձնահատկությունները: Մասնավորապես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են <<Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին>>, <<Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության մասին>>, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքների, <<Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտ>> պետական կառավարչական հիմնարկի կանոնադրության վերաբերելի իրավադրույթները:

2. G-019-16. Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում

Դասընթացն անհրաժեշտ է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում փաստաթղթաշրջանառության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները: Մասնավորեպես, դասընթացի շրջանակներում ներկայացվելու և պարզաբանվելու են <<Գործավարության կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության թիվ 1077-Ա որոշմամբ և ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի համապատասխան ներքին ակտերով սահմանված վերաբերելի ընթացակարգերը:

3. G-006-16. Ժամանակի կառավարում

Դասընթացն անհրաժեշտ է ժամանակի արդյունավետ պլանավորման, կառավարման, ինչպես նաև անձնական և մասնագիտական կազմակերպվածության մակարդակի բարձրացման մասին գիտելիքների և կարողությունների ձևավորման համար:

Դասընթացը ներառում է ժամանակի և նրա նշանակության մասին հասկացությունը, ժամանակը՝ որպես անձի էներգետիկ պոտենցիալ, ժամանակի տեսակները, ժամանակի ընկալման տեսակները, գործունեության կառուցվածքը և դրա ժամանակային բնութագրիչները, մարդը և ժամանակը ճգնաժամային իրավիճակներում, մասնագետի ժամանակային իրազեկություն, ժամանակի հիմնական «թակարդները», ժամանակի կորստի և ժամանակային նախապատվությունների վերլուծություն, ժամանակաճշտում, ժամանակի կառավարման սկզբունքներն ու ռազմավարությունները, գլոբալ նպատակների որոշումը, երկարաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը, կարճաժամկետ և օպերատիվ պլանները, նախապատվությունների որոշումը ABC վերլուծության միջոցով, Էյզենհաուերի սկզբունքը: